

ԿԱԼԻԴԱՍԱՅԻ «ԱՄՊ-ԱՎԵՏԱՔԵՐ» ՊՈԵՄԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱՄԲԻ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վ. Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Ամպ-ավետաբեր» պոեմը IV—V դդ. հնդիկ մեծ բանաստեղծ և թատերագիր Կալիդասայի բանաստեղծական գլուխգործոցն է:

Պրոֆեսոր Գ. Ս. Ջհալան պոեմը անվանում է «քնարական պոեզիայի մարգարիտ»¹, հնդիկ մի ուրիշ գիտնական՝ Ռ. Դ. Կարմարկարը վկայում է, որ այն «հավանաբար Կալիդասայի ամենահայտնի և ամենից շատ ընթերցվող ստեղծագործությունն է»²: Հիացմունքով է խոսել այդ երկի մասին Գյոթեն: Պոեմը մեկնել են 40 մեկնիչներ, որոնցից առավել հայտնի են Վալլաբ-հադեվան (X դար), Սթիրադեվան (XII դար), Դակշինավարտան (XIII դար) և Մալլինաթան (XV դար):

1813 թ. Կալկաթայում Հ. Հ. Վիլսոնը առաջին անգամ լույս ընծայեց «Ամպ-ավետաբերը», որից հետո այն բազմիցս հրատարակվել է ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Եվրոպայում: Ներկա աշխատանքը կատարելիս մենք օգտվել ենք պոեմի քննական հրատարակությունից, որ իրագործել է պրոֆեսոր Սուշիլ Կումար Դեն³: Նա կողմնորոշվում է հիմնականում Վալլաբ-հադեվայի մեկնություններով: Վերջինս պոեմի մեզ հայտնի ամենահին մեկնիչն է:

Կալիդասայի այս ստեղծագործությունը թարգմանվել է աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով: «Ամպ-ավետաբերի» առաջին ռուսերեն թարգմանությունը սանսկրիտից հրատարակել է Պ. Դ. Ռիտտերը 1914 թ.⁴, 1974 թ. Կալիդասայի մյուս գործերի հետ մեկտեղ պոեմը հրատարակվեց Ս. Լիպկինի թարգմանությամբ (Բ. Ջախարյինի տողացիի հիման վրա)⁵, 1979 թ. տողերիս հեղինակը հրատարակեց պոեմի թարգմանությունը սանսկրիտից հայերեն⁶:

Պոեմի բովանդակությունը հետևյալն է: Հարստության աստված Կուրերան իր ծառայության մեջ թերացած յակշային (այդպես էին կոչվում Կուրերային ծառայող կիսաստվածները) աքսորում է Ռամագիրի լեռան թավուտներում կրելու իր պատիժը: Յակշան արդեն մի քանի ամիս է, ինչ սիրեցյալ կնոջից հեռու է: Տեսնելով Ռամագիրի լեռան գագաթը սլարուրած ամպը, սիրուց խելակորույս կիսաստվածը խնդրում է ամպին թռչել Ալակա՝ Կուրերայի մայրաքաղաքը, իր՝ յակշայի կնոջ մոտ, լուր հաղորդել ամուսնուց և դրանով

¹ G. C. Jhala, Kalidasa, Bombay, 1949, էջ 49.

² R. D. Karmarkar, Kalidasa, Dharwar, 1960, էջ 52.

³ The Meghadūta of Kalidasa, critically edited by Sushil Kumar De, Sahitya Akademi, New Delhi, 1957 (մեջբերումները արվում են այս հրատարակությունից):

⁴ Калидаса, Облако-вестник (Мегха дута), прим. П. Риттера, Харьков, 1914, նաև՝ Калидаса, Избранное, М., 1956.

⁵ Калидаса, Избранное, пер. С. Липкина, М., 1974.

⁶ Տե՛ս Կալիդաս, Ամպ-ավետաբեր, «Գարուն», 1979, № 4, էջ 32—44:

իսկ ուժ տալ սիրուց տառապող կնոջը: Ամայը յակշայի համար մի մեծահոգի, բարձրագույն էություն օժտված շնչավոր էակ է, որ ընդունակ է հասկանալու նրա վիշտը և կարեկցելու: Ողջ պոեմը, բացառությամբ առաջին հինգ տների, յակշայի խոսքն է ուղղված ամային: Այստեղ նա նկարագրում է ամայի՝ մինչև հեռավոր գիցաբանական Ալակա քաղաքը անցնելիք ճանապարհը և շարագրում այն լուրը, որ ամայը պետք է հաղորդի յակշայի կնոջը: Եվ կարոտակնդ կիսաաստվածը իր բորբոքված երևակայությամբ ստեղծում է Կենտրոնական ու Հյուսիսային Հնդկաստանի բնության անկրկնելի պատկերները: Բնության նկարագրություններն ինքնանույապատակ չեն. նրանք միջոց են դառնում յակշայի հոգեվիճակը բացահայտելու համար: Կալիդասան նուրբ հոգեբան է, անմրցելի՝ մարդկային հոգու ամենանուրբ ելևէջները արտահայտելու արվեստում:

Յակշայի մտասեւեռումը սերն է, և նրա երևակայությամբ շնչավորված բնությունը ապրում և շնչում է սիրո ու երջանկության համար: Այսպես օրինակ՝ ամայը ներկայանում է որպես աստվածություն, որ սեր ու վայելք է ըմպում գետերից, Հնդկաստանի գետերը կանացի տարբեր բնավորություններ են մարմնավորում, անուշաբույր զեփյուռը ծաղիկների սիրեցյալն է, շողացող կայծակը՝ ամպի կինը, իսկ Ալական՝ Կուբերայի նստավայրը, ինչպես սիրող կին հպվել է լեռանը ու դեն նետել մետաքսե զգեստը՝ Գանգեսը: Բայց ինքը բանաստեղծը այս համատարած շնչավորմանը մասնակից չի լինում. պոեմի սկզբում մի սթափեցնող քառատողով նա նախազգուշացնում է, որ ինքը մնում է իրականության սահմաններում, և որ անշունչ ամայը լուր հաղորդելու կարողությունից զուրկ է: Այսպիսով յակշայի խոսքը՝ ուղղված ամային, մի ողբերգական մենախոսություն է սիրող, բայց սիրած էակից բռնի անջատված մարդու, որ զեղում է իր վիշտը, կարոտը, սերը, հույսն ու հուսահատությունը, սակայն մնում է անպատասխան: Ամայը մինչև վերջ մնում է Ռամազիտի լեռան գագաթին՝ լուռ ու անհաղորդ: Բանաստեղծի համար գլխավորը անջատման մեջ սիրո ու կարոտի բացայի հաղորդումն է ընթերցողին (հնդկական ոճաբանները բառա և կոչում այն գեղագիտական զգացումը, որ հաղորդվում է գեղաբանական երկի ընթերցողին կամ ունկնդրին):


«Ամայ-ավետարեր» քնարական պոեմ է և ըստ քննական հրատարակության ունի 111 քառատող: Կազմված է երկու մասից. առաջին մասը ընդգրկում է 1-ից 63, իսկ երկրորդը՝ 64-ից 111 քառատողերը:

Հետադոտողները պոեմը տրոհում են մի քանի բաժինների: Պոեմի առաջին մասը կազմված է երկու բաժնից. I բաժինը ելակետային իրադրության նկարագրություն է (1—12-րդ քառատողեր), II բաժինը (13—63)՝ Ռամագիտի լեռան գագաթից մինչև գիցաբանական Ալակա քաղաքը ամպի անցնելիք ճանապարհի նկարագրությունը: Պոեմի երկրորդ մասում 64—78-րդ քառատողերը տալիս են Ալակայի և այն նշանների նկարագրությունը, որոնց միջոցով ամայը կարող է ճանաչել յակշայի կացարանը: 79—94 քառատողերը նկարագրում են յակշայի կնոջը, իսկ վերջին բաժինը (95—111) յակշայի ուղերձն է:

7 Պոեմը բաժինների տրոհում ենք հիմնվելով Sh. A. Sabnis, Kalidasa. His style and his times (Bombay, 1966, էջ 83) գրքում տրված բաժանման վրա, սակայն համաձայնեցնելով քննական հրատարակության հետ:

Կալիդասայի պոեմը գրված է դասական սանսկրիտով, որ բնութագրվում է քերականական ձևերի խիստ նորմավորմամբ ու կանոնարկմամբ:

Պոեմը ստեղծված է mandakranta շափով: Այն քառատող է, որի ամեն մի տողը բաղկացած է 17 վանկից, երկար և կարճ վանկերի որոշակի հաջորդականությամբ, անհավասար ոտքերով: Տողը ունի երկու հատած 4-րդ և 10-րդ վանկերից հետո.



Քառատողը բաժանվում է երկտողերի՝ դադարի նշանով (ուղղահայաց գծիկով) և շնորհիվ այն հանգամանքի, որ երկրորդ ու երրորդ տողերի միջև սանդհին բացակայում է, մինչդեռ I ու II, III ու IV տողերի մեջ սանդհին առկա է:

Այսպիսով պոեմը ունի քառատողային կառուցվածք, նրա տունը՝ լինելով «չափական կառուցվածքի հիմնական միավորը»⁸, բնութագրվում է երկու շափումով.

ա. կշռույթային (ռիթմական) — հնչերանգային սլարփակվածությամբ և բ. շարահյուսական ու թեմատիկ ավարտվածությամբ:

Հանգը, որպես տունը կազմավորող միջոց, բացակայում է, ուստի և բ. շափումը առանձին նշանակություն է ստանում:

Քառատողերի մեծամասնությունը կազմված է մեկ կամ ավելի նախադասություններից (38 տուն): Բայց պոեմում հանդիպում են նաև այնպիսի քառատողեր, որոնք նախադասության լոկ մի մասն են կազմում:

Պրոֆ. Գ. Օ. Վինոկուրը շարահյուսական և շափական պարբերությունների հարաբերակցությունը վերլուծելիս տարբերում է երեք կարգի կառուցվածքներ⁹.

1. Տան կշռույթային ու շարահյուսական սահմանները համընկնում են:

2. Նախադասությունը շարունակվում է տան ավարտից հետո, բայց շափական սահմանով բաժանված նախադասության մասերի կապը հարկադրական չէ: Խոսքը այնպիսի նախադասությունների մասին է, որոնք կարող էին ավարտված լինել շափական պարբերության հետ մեկտեղ, բայց լրացուցիչ, շարահյուսորեն հեշտ առանձնացող մասեր ունեն:

Բերենք մի օրինակ.

Եվ այնպես պայծառ բացվում է կրկին
Իմ դեմ այն կյանքը խնդուն ու հուռթի,
Երբ հրահրուն էր և լի մեր հոգին,
Եվ հուր էր ամեն թրթիռը սրտի,
Երբ ամեն մի միտք ցնորդ էր մի վառ,
Երբ ամեն մի իղձ հրով էր զինում,
Երբ թռչում էր սիրտն աշխարհից խավար
Դեպ այն, որ շունի, որ շունի անուն...¹⁰

⁸ В. М. Жирмунский, Композиция лирических стихотворений. Теория стиха, Л., 1975, էջ 113—114.

⁹ Г. О. Винокур, Слово и стих в «Евгении Онегине», տե՛ս «Пушкин. Сборник статей». М., 1941, էջ 184—185.

¹⁰ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1961, էջ 161.

Այս օրինակում շորրորդ տողից հետո նախադասությունը կարող էր ավարտվել: Չափի և շարահյուսության միջև հակասություն չի ստեղծում այն հանգամանքը, որ նախադասությունը շարունակվում է բաղմակի որոշիչ երկրորդական նախադասությունների հավելման միջոցով (5-րդ, 6-րդ, 7—8-րդ տողեր): Իսկ քառատողի շափական սահմանը կորցնում է իր փակ բնույթը, դառնում է շղթայի բաց օղակ, որին կարող են միանալ ուրիշ ինքնուրույն օղակներ:

3. Նախադասությունը չի ավարտվում և շարահյուսորեն չի կարող ավարտվել տան ավարտի հետ, որովհետև ստիպողաբար շարունակություն է պահանջում:

Տողանցի դեպքերի հետ մեկտեղ, հնարավոր են նաև դեպքեր, երբ պարզապես ստիպողաբար իրար հետ կապված նախադասության անդամները հայտնվում են տարբեր տներում: Օրինակ.

Այն ափերում, ուր դու,—օ, տարիներ առաջ,—
Թափառելով՝ սիրո երգեր էիր գրում
Եվ գուրգուրում, իբրև սերունդների երազ
Ա՛յն, որ թաղված մնաց քո գրքերում,—
Այն ափերում հիմա մի բարբարոս հովիվ,
Երազելով քեզ պես կնոջ զգվանք ու սեր—
Ունկնդրում է միայն շշուկներին հովի,
Եվ, երգերի տեղ քո, երգում անբառ մի շեր...¹¹:

Չորրորդ տողից հետո նախադասությունը ստիպողաբար շարունակություն է պահանջում և ավարտվում է միայն 8-րդ տողի հետ:

Բ. Վ. Տոմաշևսկին այս տիպի կառույցները համապատասխանաբար անվանում է 1. փակ, 2. բաց, 3. ընդհատված¹²:

Անհրաժեշտ է նշել, որ թե՛ Վինոկուրը և թե՛ Տոմաշևսկին կառույց բառով կոչում են այն տունը, որ ունի փակ, բաց կամ ընդհատված կառուցվածք և ոչ թե ամբողջ նախադասությունը, որ կազմված է երկու կամ ավելի տներից: Ընդ որում Բ. Վ. Վինոկուրը հաշվի է առնում միայն բանաստեղծական տան առաջընթաց շարժումը: Այսինքն, երբ նա ասում է, թե տունը իրենից ընդհատված կառույց է ներկայացնում, նկատի ունի, որ տան ավարտը ընդհատված տարատեսակին է պատկանում: Բ. Վ. Տոմաշևսկին դիտարկում է ոչ միայն տան առաջընթաց, այլև հետընթաց շարժումը, այսինքն ընդհատված կառույց է անվանում նաև այն տունը, որի սկիզբը ընդհատված տարատեսակին է պատկանում, թեև ավարտը կարող է փակ լինել: Օրինակ.

Դու նոր մի ուժով նորից ընձյուղել,
Կոտրված ճյուղերդ ես վերստին ուղղել,
Եվ եթե կրկին կորվել ես՝ արդեն
Ողկույզների տակ այն աղամանդե,
Որ ճաքճքել են քո քաղցրությունից,
Մինչ դառնությունդ... դարձել է գինի...¹³:

Վերջին երկտողը հտընթաց շարժման ժամանակ իրենից ընդհատված կառույց է ներկայացնում:

¹¹ Ե Ղ Ի Չ Ե Չ ա Ր Ե Ն Ե ց, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1963, էջ 401:

¹² Б. В. То м а ш е в с к и й, Строфика Пушкина.—«Пушкин. Исследования и материалы», т. II, М.—Л., 1958, էջ 123:

¹³ Պ ա Ր Կ ւ Ր Ս և Կ, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1972, էջ 103:

Մենք գործածում ենք նոր տերմին՝ ընդհատված/բաց պարբերությք, նկատի ունենալով տների այն խումբը, որի առաջին տունը առաջընթաց շարժման դեպքում իրենից ընդհատված/բաց կառույց է ներկայացնում և այդպիսով որոշում է պարբերության ողջ շարահյուսական պատկերը (պարբերության բառը այստեղ պայմանականորեն է օգտագործվում, որովհետև պատահում է տների խումբ, որ բառիս բուն իմաստով պարբերության չի կազմում: Տե՛ս, օրինակ, ստորև 32—33-րդ քառատողերը): Այսպիսով, մեր հոգվածում գործ ունենք հետևյալ հասկացությունների հետ. տուն (քառատող), որ իրենից ներկայացնում է ընդհատված/բաց կառույց (կամ ունի ընդհատված/բաց կառուցվածք) առաջընթաց շարժման դեպքում. քառատող ընդհատված/բաց կառույց ետընթաց շարժման դեպքում, ընդհատված/բաց պարբերություն:

Ներկա հոգվածում կանդրադառնանք միայն ընդհատված ու բաց կառուցվածքի տներին և կփորձենք ցույց տալ նրանց ոճաիմաստային գործառնությունները:

Ընդհատված պարբերություններ. կալիդասայի պոեմի 32—33-րդ քառատողերը ընդհատված պարբերության են ներկայացնում, որը պարզ ընդարձակ նախադասություն է երկարաշունչ դերբայական դարձվածով (32) և ստորոգյալի խմբով (33).

(32) jālodgīrnairupacitavapuh keśasamskāradhūpair bandhuprītyā bhavanaśikhibhirdattanṛttopahārah/harmeśvasyāh kusumasurabhiśvadhvakhinnāntarātmā/nītva rātram Jalitavanitāpadarāgaṅkīteṣu

(33) bhartuh kanthacchavīriti ganaiḥ sādaram vikṣyamānaḥ/punyam yayastribhuvanagurordnāma candesvarasya dhūtodyānam kuvalayarajogandhibhīrgandhavatyās/toyakridānīratayuvatisnānatiktairmarudbhīh¹⁴.

(32) Լուսամուտներից արտաշնչված վարսափոշով օծված մարմնով. (դու), որիդ տանու սիրամարգերը Լոբայրական սիրո պար կձոնեն, ճամփից պարտաւուն, գիշերը անցկացնելով նրա (Ուղջայինի քաղաքի) ծաղիկներով բուրոզ դղյակներում, որոնց հատակները գեղանի կանանց ներկված ոտքերի դրոշմն են կրում...

(33) Ուղեկցվելով գաների հիացական հայացքներով, (որոնք ասում են). Շնա (այսինքն ամպը) նույն գույնի է, ինչ որ (մեր տիրոջ) վիզը—գնա եռաշխարհների տիրակալի՝ Շիվայի սուրբ կացարանը¹⁵, որի այգիները ալեկոծվում են Գանդհավատի գետի քամիներով, որ բուրումնավետ են լուրթ լոտոսների ծաղկափոշուց ու ջրում խայտող դեռատի կանանց (օծանելիքներից)¹⁶:

32-րդ քառատողը ընդհատված կառույց է առաջընթաց շարժման դեպքում, իսկ 33-րդը բաց է ետընթաց շարժման ժամանակ, այսինքն նրա սկիզբը բաց սուբառեսակին է պատկանում:

Տվյալ դեպքում այսպիսի կառուցվածքը բացատրվում է կոմպոզիցիոն կշռությամբ: Նախադասությունը երկու քառատող ձգելը ասես թե ավարտին է

¹⁴ Այսուհետև քառատողերի բնագրերը չեն բերվի:

¹⁵ Շիվա աստծու վիզը մուգ կապույտ է, որովհետև նա խմել է այն թույնը, որ կարող էր կործանել աշխարհը: Գաները Շիվայի շքախումբը կազմող կիսաստվածներն են: Կացարան ասելով նկատի ունի Շիվայի տաճարը Ուղջայինի մոտակայքում:

¹⁶ Իրոշիչ Լրկորդական նախադասություններով այստեղ թարգմանվում են բահուլրիհի գարձվածները: Բահուլրիհին ստացական լարդ բառ է, որ իր բաղադրիչների լրացումներով հանդերձ կազմում է ընդարձակ դարձվածներ:

հասցնում կարճ մակբայական-դերբայական (деспричастный) կամ դերբայական (причастный) դարձվածներով¹⁷ այն քառատողերի փուլը, որոնք իրենց կառուցվածքով ղուդահեռ են: Նախորդ քառատողերը, ուր ամպին կոչ է արվում ճանապարհ ընկնել կամ այլ գործողություններ կատարել, կառուցվածքով որոշակիորեն միանման են: Օրինակ, 16-րդ քառատողում՝

(16) kṣetram druhya mālam . . . բարձրանալով Մալայի դաշտը՝
kl̥c̥t̥paścadvraja . . . դնա մի փոքր արեմուտք . . .

Այնուհետև Ամրակուտա լեռան թեման է, որ ավարտվում է նույնատեսակ քառատողով (20), ուր կարճ մակբայական-դերբայական դարձվածին հետևում է շարժման բայ, որ արտահայտված է ըղձական եղանակով՝ հրամայականի դորժառույթով:

20 tasyās նրա (գետի)
. . . /loyamadaya gaccheḥ . . . ջուրը վերցնելով՝ գնա . . .

26-րդ քառատողը, որ ավարտում է 'Բաշարնա վայրի թեման, նույնանման կառուցվածք ունի.

(26) viś'ratāḥsanvraja vananaditirajalanī sincann
udyanānām navajalakāṇalryuthikājalakānī . . .

Հանգիստ առնելով՝ գնա, ցողելով թարմ կաթիլների վանանդիի ափերին բուսած խամիկների մատղաշ կոկոններին...:

Այնուհետև շարժման բայերի ղուգակցումը մակբայական-դերբայական կամ դերբայական դարձվածների հետ ավելի հաճախակի է դառնում:

(28) nirvindhyaḥ pathi bhava rasābhyantarāḥ sannipatya
ծամփին, իջնելով, մտիւր նիրվինդհյա (գետի) ջրերի գիրկը...

(30) prāpyāvantīn . . . anusara . . . viśālam

Հասնելով Ավանտի... գնա... Վիշալա (Ուղջայինի) քաղաքը

(32) . . . n̥t̥vā ratrim անցկացնելով գիշերը . . .

(33) vikṣyamānah . . . yāyāḥ . . . (գանների հայացքներով) ուղեկցվելով, գնա
dhāma candesvarasya Շիվայի կացարանը

Շիվայի տաճարը՝ Մահակալան, հանդիսանում է կարծես միանման կառուցվածքով քառատողերի փուլի տրամաբանական ավարտը, այստեղ (Մահակալայում) ամպը պետք է երկար ժամանակ դադար առնի: Շիվայի տաճարը մինչ այդ նկարագրված ճանապարհահատվածի վերջնակետն է, և կշռույթային պատկերը շատ լավ է արտացոլում այդ միտումը: 32—33-րդ քառատողերում վերջապես կշռույթային շարժման լարումը թուլանում է: Եվ այդպիսով բանաստեղծական կշռույթի հմայող միալարությունը ընդմիջվում և

17 Սանսկրիտում դերբայը (причастие) կարող է ինչպես որոշիչ լինել, այնպես էլ մակբայական դերբայի (деепричастие) դեր խաղալ: Այդ իսկ պատճառով տարբերում ենք 3 տիպի դարձվածներ՝ որոշիչ-դերբայական (определительно-причастный оборот), մակբայական-դերբայական (деепричастный) և դերբայական (причастный): Վերջինս համարժեք է մակբայական-դերբայական դարձվածին:

հաղթահարվում է մինչև Մահակալա ճանապարհորդությունը նկարագրող ողջ հատվածի սաստկացող կշռույթով: Այն քառատողում, ուր ամպը հասնում է Մահակալա, լարումը թուլանում է:

Ըստ քառատողերի մեջ մտնող շարահյուսական բաղադրիչների կազմի, քառատողերի զույգի բանաձևը կարելի է ներկայացնել այսպես.

$$(4) + (4)^{18}$$

Ընդհատված պարբերությի են կազմում նաև 79—80-րդ քառատողերը: 79-րդ քառատողը հնթակայի լրացումներով ընդարձակված որոշիչ երկրորդական նախադասություն է, որի ենթական՝ արտահայտված հարաբերական $y\bar{a}$ որը դերանվամբ, գլխավոր նախադասության մեջ ունի համապատասխան $t\bar{a}m$ նրան համահարաբերականը (коррелят): Գլխավոր նախադասությունը դրավում է 80-րդ քառատողը և ընդարձակված է ուղիղ խնդրի լրացումների հաշվին: Ընդհանուրը 32-րդ և 79-րդ քառատողերի միջև այն է, որ նրանք երկուսն էլ շարահյուսորեն կախյալ են հաջորդ քառատողից և ստիպողաբար շարունակություն են պահանջում: Նրանցով սկսված նախադասությունները ավարտվում են միայն հաջորդ քառատողի վերջում: Այսպիսով, 79-րդ քառատողը ընդհատված կառույց է առաջընթաց շարժման, իսկ 80-րդ քառատողը բաց է ետընթաց շարժման դեպքում:

79-րդ քառատողով սկսվում է յակշայի կնոջը նկարագրող բաժինը (79—94): Եվ, քանի որ նկարագրության առարկան (կինը) նույնն է, բանաստեղծը այս բաժնում հաճախ է կիրառում ընդհատված կամ բաց կառուցվածքի տներ: Մասնավորապես 79—80 քառատողերում նկարագրված է կնոջ արտաքինը, ինչպիսին այն եղել է մինչև ամուսնու աքսորվելը (առաջադաս որոշիչ երկրորդական նախադասության մեջ), և այն փոփոխությունները, որ նա կրել է անջատման ընթացքում (80-րդ քառատող գլխավոր նախադասություն): Փոփոխությունները նկարագրվում են երկու դիպուկ համեմատություններով, որոնց պատկերները անջատման մեջ կարոտից տառապողի խորհրդանիշն են. 1. իր վարուժանին կարոտող շակրավակի թռչունը և 2. սառնամանիքից թռչնած լոտոսը: Հաջորդ տներում բանաստեղծը մանրամասն կբացատրի կնոջ վիճակը, իսկ այստեղ նա միայն ուրվագծում է կարոտակեղ կնոջ վիճակը և տալիս նրա ընդհանրացված նկարագրությունը:

Քառատողերի զույգի բանաձևը— $[4] + [4]$:

Բաց պարբերությիներ. բաց պարբերությի իրենից ներկայացնում է բաց շարք, կազմված է երկու, երեք և ավելի մասերից, որոնց քանակը հնարավոր է միշտ ավելացնել: Այդպիսի պարբերությի առաջին քառատողը ավարտված նախադասության երևույթ ունի: Հարաբերական դերանունով կամ մակբայով նրան հավելվում է հաջորդ քառատողը, որպես որոշիչ երկրորդական նախադասություն: Այդպես 31-րդ քառատողը հավելվում է 30-րդին, իսկ 63-րդ քառատողին հաջորդաբար հավելվում են ևս 8 քառատող՝ կազմելով բարդ պարբերությի: Որպես օրինակ բերենք 30—31 տների տողացին:

¹⁸ Առանց փակագծերի հիմնական մասից անդամատվում են այն դարձվածները, որոնք քառատողի շարահյուսական պատկերի համար վճռական դեր չեն խաղում. կլոր () փակագծերով հիմնական մասից անդամատվում են այն դարձվածները, որ կարևոր նշանակություն ունեն, ուղղանկյուն փակագծերով []՝ բարդ նախադասության բաղադրիչները: Թվերը ցույց ձև տալիս այն տողերի քանակը, որ գրավում է յուրաքանչյուր շարահյուսական բաղադրիչը:

(30) Հասնելով Ավանտի, ուր ծեր գեղջուկները Ուղայանայի մասին ասքերի գիտակ են, գնա վերոհիշյալ գեղանիստ բաղաբ Ուղջայինին. (այն) ասես լինի եղեմի բեկոր, որ երկիր վերադառնալով իրենց հետ են բերել (ապրելու համար) երկնարնակները, երբ նրանց բարի գործերի պտուղները համարյա սպառվել են.

(31) ուր հովր Սիպիայի, բուրումնավետ՝ արևագային բացվող լոտոսների հետ ունեցա՜յ մտերմությունից. հետո ցրելով կռունկների զիլ ու կրքոտ կանչերը, թարմացնում է սիրուց հոգնարիկ կանանց մարմինները, ինչպես տարփածուն է շողմում, իր փափագին հասնելու համար:

30-րդ քառորդը համեմատական դարձվածով պարզ ընդարձակ նախադասություն է, 31-րդ քառատողը միանում է նրան չձևա ուր հարաբերական մակբայով, որպես որոշիչ երկրորդական նախադասություն:

63-րդ քառատողը երկրորդ երկտողում որոշիչ երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական նախադասություն է: Նրան հաջորդաբար միանում են ևս 8 քառատող, կադմելով բարդ պարբերությու Լեանձին քառատողերի կապը ստիպողական չէ. պարբերությու կարող է ընդհատվել ցանկացած քառատողով: Փաստորեն այդ 8 քառատողերը, ինչպես և 31-րդ քառատողը, «աղատորեն» հավելվող երկրորդական նախադասություններ են, որոնք գլխավոր նախադասության մեջ համահարաբերական բառ չունեն և չեն ազդում գլխավոր նախադասության կշռության-հնչերանգային բնութագրի վրա: Այդպիսի պարբերության առաջին քառատողը բաց կառույց է ըստ առաջընթաց շարժման, մյուս հավելվող քառատողերը կարելի է համարել բաց՝ առաջընթաց շարժման և ընդհատված՝ ետընթաց շարժման ժամանակ:

Հետաքրքիր է, որ 30—31-րդ քառատողերը ամպի ճանապարհը նկարագրող բաժնում բաց պարբերության օգտագործման միակ դեպքն են: Այդ քառատողերում նկարագրվում է Ուղջայինին, այն քաղաքը, ուր ամպը մտնում է՝ շեղվելով իր հյուսիսահայաց ճանապարհից: Մինչ այդ, տարբեր նպատակակետերի նկարագրությանը հատկացվում էր մեկ, ծայրահեղ դեպքում մեկուկես քառատող: Իսկ Ուղջայինին նախ նկարագրվում է 27-րդ քառատողում: Այստեղ յակշան դեռ սոսկ նշում է, որ լավ կլինի ամպը այցելի այդ քաղաքը, հակառակ դեպքում շատ բան կկորցնի: Այնուհետև նկարագրվում են Նիրվինդհյա և Սինդհու գետերը, որ գտնվում են Ուղջայինի ճանապարհին և, վերջապես, 30—31-րդ քառատողերում տրվում է Ուղջայինի ընդարձակ նկարագրությունը: Քաղաքի նկարագրությունը շարունակվում է և 32-րդ քառատողում, որն ընդհատված կառույց է: Եվ միայն 33-րդում ամպը թողնում է Ուղջայինին, որ ուղևորվի դեպի Շիվայի տաճարը: Այսպիսով, թեև Ուղջայինին գտնվում է ամպի հիմնական ճանապարհից դուրս, և ամպը պետք է գնա այնտեղ իր հաճույքի համար միայն (յակշան շահագրգռված չի կարող լինել, որ ամպը տեսնի քաղաքը), քաղաքին նվիրված է 4 քառատող: Պատահական չէ, որ հետադոտողները Ուղջայինին համարում են Կալիդասայի հարադատ քաղաքը, կամ էլ մի քաղաք, ուր նա երկար ապրել է¹⁹:

Նկատի ունենանք նաև, որ բաց պարբերությու մեկ էլ օգտագործվում է Ալակայի նկարագրության ժամանակ, դեպի ուր ուղղված են յակշայի բոլոր մտքերն ու իղձերը (63—71-րդ քառ.):

¹⁹ Տե՛ս օր. G. C. J h a l a, Kalidasa, էջ 22.

Բանաձևեր 30—31— [2+2] + [4]

63—71— [2] + [2] + [4] + [4] + [4] + [4]

[4] + [4] + [4] + [4]

Յուրօրինակ կառուցվածք ունի 85—89-րդ քառատողերից կազմված պարբերությամբ:

(85) Հոգսերով տարված՝ կարոտը ցերեկն այնքան չի տանջի:

Հատկապես թախծոտ եմ պատկերացնում քո անմխիթար ընկերունդուն գիշերու Այդ իսկ պատճառով, որպեսզի ուրախացնես առաքինուն իմ մասին լուրով, մոտակա լուսամուտի մոտ կանգնած՝ տե՛ս կեսգիշերին անքուն, գետնին պառկած հավատարիմ կնոջը,

(86) տառապանքներից հյուծվածին, անջատման մահճում մի կողքի պառկածին, (որ բարախկ է) ինչպես արեգակնածագ երկերում (երևացող) լուսնեղջյուրի մեկ տասնվեցերորդ մասը. արցունքներով անվախճան գիշերը անցկացնողին. գիշեր, որ վայելքի ուրախության մեջ թռչում էր, ինչպես ափնթարթը... և այլն:

Առաջին քառատողը կազմված է երեք նախադասությունից: Առաջին երկուսը գտնվում են I և II տողերում և համադրվում են միմյանց: Երրորդ նախադասությունը, որ գրավում է II երկտողը, կապվում է առաջին երկուսին հետևությունյան հարաբերությամբ: III նախադասության pas'ya տե՛ս ստորոգյալի ուղիղ խնդիրն է sadhvīm հավատարիմ կնոջը բառը: Այնուհետև 86, 87, 88, 89-րդ քառատողերում իրար են հաջորդում sadhvīm խնդրին լրացնող բաղմակի որոշիչներ: Բայց գտնվում է 85-րդ քառատողում, մյուսներում արև մտովի վերաբանվում է: Այսպիսով, մենք ունենք հինգ տներից կազմված պարբերությամբ, որ ընդարձակված է 85-րդ քառատողում գտնվող ուղիղ խնդրի բաղմակի ետադաս որոշիչների հաշվին: Փաստորեն յուրաքանչյուր աղագիսի քառատողը որոշիչների միջոցով նկարագրում է կնոջ այս կամ այն վիճակն ու գործողությունը անջատման մեջ: Չնայած ձևական անավարտվածությունն ու 85-րդ քառատողից ունեցած կախվածությանը, այդ քառատողերը միանգամայն ինքնուրույն միավորներ են, որ գիտակցվում են որպես առանձին ամբողջություններ:

Օրինակ, 86-րդ քառատողում yāpayāntīm անցկացնողին հայցական հոլովով դերբայը ունի իր խնդիրը (ratrī գիշեր բառը), որը լրացվում է որոշիչ երկրորդական նախադասությամբ: Այդ քառատողը ունի նաև համեմատական դարձված: 88-րդ քառատողում sārāyāntīm ետ գցողին դերբայի ուղիղ խնդիրը, որը արտահայտված է ցուցական դերանվամբ (sikhām հյուսիս բառի փոխարեն), առաջին տողում լրացվում է որոշիչ երկրորդական նախադասությամբ: Աղագիսի քառատողը կարող է ունենալ համեմատական դարձված, ինչպես 89-րդը: Հինգ քառատողից կազմված այս հատվածում նկարագրվում է յակչայի կինը գիշերը, երբ թախիժը առանձնապես ծանր է: Մինչ այդ 81—84-րդ քառատողերում նկարագրվում էին կնոջ գործողությունները ցերեկը (տե՛ս ստորև): Բնականաբար, այդ մի քանի քառատողը կազմող նկարագրությունը ձևականորեն պետք է միավորվեր մի ամբողջության մեջ: Մյուս կողմից, այն հանգամանքը, որ բաղմակի որոշիչները վերաբերում են pas'ya տե՛ս ստորոգյալի sadhvīm ուղիղ խնդրին, ստիպում է մեզ ընթերցելիս միշտ նկատի ունենալ, որ յակչան ստիպողաբար խնդրում է ամպին նայել կնոջը: Ամուսնուց անջատված կնոջ տվյալտանքները մենք տեսնում ենք և՛ յակչայի, և՛ ամպի աչքերով, քանի որ յակչայի pas'ya տե՛ս կնոջ թաքուն մղում ունի:

կնոջ գիշերային սրտաճմլիկ տառույտանքների նկարագրությամբ հուղել ամպին: Պատահական չէ, որ այդ հատվածից հետո եկող 90-րդ քառատողում յակշայի համոզվածությունն է արտահայտվում, որ ամպը չի կարող անտարբեր մնալ, տեսնելով դժբախտ կնոջ տանջանքները, և այդ դատողությունը վերջին տողում հաստատվում է ընդհանրացնող ասույթով.

prāyaḥ sarvo bhavati karuṇavṛttirardrantarātma

... Ձի բնորոշ սիրտը (բառացի՝ ներսում ջուր պահող սիրտը, այսինքն արտասովոր պատրաստ) միշտ էլ պատրաստ է խղճահարության:

Այս պարբերության առաջին քառատողը, ինչպես և մյուսները, բաց կառուցվածք ունեն առաջընթաց շարժման դեպքում, հտընթաց շարժման դեպքում 86, 87, 88, 89-րդ քառատողները ընդհատված կառուցվածք ունեն:

Քառատողների խմբի բանաձևը՝ [1] + [1] + [2] + [4] + [4] + [4] + [4]:

Բաց պարբերության են ներկայացնում նաև 82—83—84-րդ քառատողները, որ միավորվում են մի բարդ համադասական նախադասության մեջ, որի մասերը կապվում են $\vee a \dots \vee \bar{a} \dots$ կառուցով: Կամ... տրոհական շաղկապներով: Այդ համադաս մասերի ստորոգյալները արտահայտվում են ներկա ժամանակի դերբայներով կամ էլ ստորոգելիական վերադրով առանց օժանդակ բայերի: Ամբողջ պարբերության ավարտվում է ընդհանրացնող ասույթով (84-րդ քառատողում), որ մեկնաբանում է այն դանադան, փոխադարձաբար բացառող դործողությունները, որոնցով զբաղված է յակշայի կինը նրա բացակայության ընթացքում: Դրանք սովորական, ընդունված գործեր են, որոնց միջոցով ցերեկը՝ սպասելով ամուսնուն, կարող է ժամանակը կարճել միայնակ կինը: Այդպիսի կառուցվածքը ոչ միայն սահմանազատում է տվյալ հատվածը շարահյուսորեն այլ կերպ արտահայտված հատվածներից, այլև թարմացնում, հարստացնում է պոեմի կշռության պատկերը: Ինչպես առաջընթաց, այնպես էլ հտընթաց շարժման ժամանակ քառատողները բաց կառույց են ներկայացնում:

Քառատողների խմբի բանաձևը՝ [1] + [1] + [1] + [1] + [1] + [2] + [1] + [1]:

Այսպիսով, իր գեղարվեստական խնդիրներին համապատասխան, բանաստեղծը ընդհատված և բաց կառուցվածք ունեցող տները վարպետորեն հերթագայում է սովորական փակ կառուցվածքի տների հետ: Առաջինների օգտագործումը երեք հիմնական նպատակ է հետապնդում.

1. Քառատողների տվյալ խմբի կենտրոնական բառի դենոտատը առավելագույնս բնութագրելու համար (կենտրոնական բառ է այն բառը, որ տվյալ պարբերության իրադեպային առանցքն է, կրում է հաղորդակցական ծանրաբեռնվածության մեծագույն բաժինը): 30—31-րդ քառատողների համար այդպիսի կենտրոնական բառ է—«Ուղջայինի» բառը, որի դենոտատը ավելի լրիվ բնութագրելու համար էլ հենց բաց կառույց է օգտագործվում (զլխավոր նախադասություն, որին հավելվում է որոշիչ երկրորդական նախադասություն): 63—71-րդ քառատողների կենտրոնական բառն է Ալական, յակշայի կնոջ նկարագրող հատվածներում՝ Կինը:

2. Այդպիսի կառույցների օգտագործումը օգնում է զանազան հատվածների սահմանազատմանը, տարբեր տեղեկությունների տրամաբանական ու արտահայտչական համադրմանն ու հակադրմանը: Օրինակ՝ կնոջ նկարագրության մեջ օգտագործվում են մեկ ընդհատված և երկու տարբեր բաց պար-

բերույթներ (79—80-րդ, 83—84-րդ, 85—89-րդ), որ զուգորդվում են փակրտների հետ: Առաջին հատվածում (79—80-րդ) բանաստեղծը կնոջ ընդհանրացված նկարագրությունն է տալիս մինչ անջատումը և անջատումից հետո: Հաջորդ երկու հատվածներում, որ պատմում են կնոջ վիճակն ու գործողությունները ցերեկն ու գիշերը, նկարագրությունը մասնակիանում է ու մանրամասնանում:

Ալակալի նկարագրությունը նույնպես սահմանադատվում է սյուս բաժիններից՝ առաջինից շարժման ժամանակ բաց քառատողերի որոշակի շարահյուսական ձևավորմամբ:

3. Հնդհատված և բաց պարբերություններ հարստացնում ու թարմացնում են պոեմի կոմպոզիցիոն ռիթմիկան (32—33-րդ, 63—71-րդ, 82—84-րդ և այլն քառատողեր): Ամսի ճանապարհորդությունը նկարագրող բաժնի սահուն, լայնաշունչ կոմպոզիցիոն կշռույթը Ալական նկարագրող բաժնում ընդմիջվում է թվարկման սաստկացող կշռույթով: Կնոջը նկարագրող բաժնի կշռույթը հարստանում է տարբեր պարբերությունների հերթագայությամբ: Իսկ 32—33-րդ քառատողերում ընդհատված պարբերությամբ օգտագործման դեղավեցտական նպատակադրման մասին արդեն խոսել ենք:

ОБ ОДНОЙ ОСОБЕННОСТИ СИНТАКСИЧЕСКОЙ СТРУКТУРЫ ПОЭМЫ КАЛИДАСЫ «ОБЛАКО-ВЕСТНИК»

В. В. АРАКЕЛЯН

(Резюме)

Поэма «Облако-вестник» великого древнеиндийского поэта и драматурга IV—V вв. Калидасы была в центре внимания многих исследователей, но в синтаксическом плане она не изучалась. В настоящей статье рассматриваются разомкнутые и открытые конструкции поэмы. Г. О. Винокур и Б. В. Томашевский называют открытой такую строфу, с концовкой которой предложение не кончается, но связь отдельных частей не принудительна. Разомкнутой называется строфа, с концовкой которой предложение не кончается и принудительно требует продолжения. С помощью этих двух типов конструкций Калидаса составляет группы строф, которые мы называем открытыми и разомкнутыми периодами. В статье раскрываются цель и художественные задачи употребления этих периодов в поэме «Облако-вестник».